ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2021 թվականի ապրիլի 22-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-33»**

ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-33» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 22.04.2021 թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 22.04.2021 թ. տրամադրված պարզաբանումները.

Հարցադրում N 1՝ Չափման միավորը գրված է լրակազմ, բայց պարզ չէ, թե լրակազմի մեջ ինչ է մտնում; պետք է պարզաբանել, թե արդյոք նշված քանակների թեստերի քանակներն են, իսկ եթե ոչ, ապա յուրաքանչյուր լրակազմը քանի՞ թեստի համար պիտի նախատեսված լինի:

Պարզաբանում N 1՝ «ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-33» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի հավելված թիվ 1-ում (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց) 1-ն և 2-րդ չափաբաժինների չափման միավորները թերի են նշված՝ «հատ» բառի տեղը նշված է «լրակազմ»: Հրավերում կկատարվեն համապատասխան փոփոխություններ և փոփոխված տարբերակը կհրապարակվի տեղեկագրում:

Հարցադրում N 2՝ Տեխնիկական բնութագրում նշված է, որ հավաքածուները պետք է ունենան առնվազն 2 գենի հայտնաբերման հնարավորություն: Խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք հավաքները պետք է ունենան 2 գեների միայն հայտնաբերման, թե հայտնաբերման և տարբերակման հնարավորություն:

Պարզաբանում N 2՝ Տեխնիկական բնութագրում նշված թեսթերը պետք է ունենան առնվազն 2 գենի հայտնաբերման հնարավորություն: Հայտնաբերման և տարբերակման հնարավորությունը չի պահանջվում, սակայն ընդունելի տարբերակ է:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-33» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վահան Մանուկյանին:

Հեռախոս՝ 010-55-06-01
Էլեկտրանային փոստ՝ procurement@ncdc.am
«ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-33» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը